ԳԻՐՔԱԿՈՍՈՒԹԻՒՆ. ՍՈՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ եկեղեցու պատմության օբյեկտիվ եւ անաչառ գիտատեսական ցանկացած վերլուծություն արդիական է ինչպես պատմական, եկեղեցու ազգապահպան, միավորիչ եւ ազգամշակութային գործառույթների, այնպես էլ ազգային ինքնության եւ ազգահոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից: Այդ ոլորտի խիստ արժեքավոր եւ ընդհանրացնող աշխատանքների թվում պետք է դասել վաստակաշատ հայագետ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցին» գողտրիկ ուսումնասիրությունը:

Ծավալով սեղմ, բայց բովանդակությամբ հագեցված այս աշխատանքն աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով: Դրանցից առաջինն այն է, որ ժամանակագրական տեսանկյունից աշխատանքը եզակի է, քանի որ նրանում Հայ եկեղեցու պատմությունը ներկայացված է Առաքելական շրջանից մինչեւ XX դարի 60-ական թվականների վերջը: Առանձնահատկություններից հաջորդն այն է, որ բազմավաստակ հայագետը քննարկվող հիմնահարցերը ներկայացրել է ոչ թե մեկուսացված, այլ հայ ժողովրդի եւ ազգային մշակույթի պատմության հետ ունեցած սերտ առնչության մեջ: Արդյունքում Հայ եկեղեցու բազմապլան եւ բազմահարթ պատմական գործունեությունը գնահատվել է ինչպես ազգային պատմության, այնպես էլ հայ ժողովրդի ինքնության եւ հոգեւոր մշակույթի զարգացման օրինաչափությունների համակարգված վերլուծության հիմնախնդիրների հետ ունեցած սերտ կապի մեջ: Այդ տեսանկյունից աշխատանքի գիտատեսական նշանակությունը նաեւ նրանում է, որ **Հայ եկեղեցու պատմության հավատքային տեսանկյունը ներկայացվել է նաեւ ազգային բազմադարյա հասարակական փորձի** դիրքերից, ինչը հեղինակին թույլ է տվել Հայ եկեղեցու պատմությունը գնահատել երկակի նշանակությամբ՝ **իբրեւ ազգային հոգեւոր կյանքի հիմք եւ ինքնության անքակտելի մաս** եւ, միաժամանակ, **իբրեւ մշակույթաստեղծ եւ մշակութապահպան** ազդեցիկ ազգային գործոն:

Երրորդ, բազմավաստակ հայագետը միանգամայն փաստարկված ցույց է տալիս, որ Հայ եկեղեցու պատմությունն ամենեւին էլ «ներփակ տարածք

չէ», որ հավատի եւ կրոնական գիտակցության պատմություն լինելով հանդերձ Հայ եկեղեցու պատմությունը իրենով պայմանավորում եւ միաժամանակ բնութագրում է նաեւ ազգային կյանքի բազում այլ գումարելիներ: Այդ համատեքստում մեծապես պետք է կարեւորել հատկապես հեղինակի կողմից գիտատեսական եւ աստվածաբանական ու եկեղեցագիտական մեթոդների ներդաշնակ զուգակցումը, որի արդյունքում ուսումնասիրությունը ձեռք է բերել գիտագործնական անուրանալի նշանակություն, քանի որ սերտորեն առնչվում է հայ ժողովրդի ազգային նկարագրի, ազգային եւ ազգակրոնական ինքնության եւ հոգեկերտվածքի ձեւավորման հիմնահարցերին: Փաստ է, որ մերօրյա արագ փոփոխվող աշխարհակարգը, ինչպես նաեւ համաշխարհայնացման խորացող քաղաքականությունը իրենց անուրանալի կնիքն են դրել հասարակության հոգեւոր կյանքի վրա: Դրանց ազդեցությամբ հոգեւոր դաշտ են «ներմուծվել» նաեւ նորանոր կրոնական ու խարիզմատիկ շարժումներ, որոնք ամենայն սրությամբ ուղղված են ազգային արժեքների դեմ: Այդ համատեքստում Ե. Տեր-Մինասյանի «Հայ Եկեղեցու պատմություն» ձեռնարկը պետք է դասել վերլուծական այն աշխատանքների շարքում, որոնցում հասարակական եւ անհատական գիտակցության, ազգային հոգեբանության եւ գաղափարախոսության վրա կրոնի հետադարձ ազդեցության ուսումնասիրությունը եւ համակողմանի արժեւորումը շաղկապված են ազգակրոնական եւ ազգահոգեբանական ինքնության հիմնահարցերի համակարգված վերլուծության հետ, որով կիրառական մեծ նշանակություն են ձեռք բերում օտար ազդեցություններին դիմակայելու եւ ազգակրոնական արժեքների վերարտադրությունն ուսումնասիրելու գործում:

Վերլուծական աշխատանքը մեծ կարեւորություն ունի նաեւ այն մարտահրավերների համատեքստում, որոնք այսօր ուղղված են Հայ եկեղեցուն՝ Հայաստանում աղանդավորության տարածման եւ արմատավորման տեսքով: Աշխատանքը նաեւ կարող է իր լուման ներդնել միջեկեղեցական եւ միջկրոնական բազմահարթ հարաբերությունների տեսական եւ գործնական հիմնահարցերի մշակման, արդի աշխարհում շարունակ խորացող կրոնական բազմակարծության եւ կրոնների երկխոսության, ներեկեղեցական կյանքի տարբեր ոլորտների համակողմանի վերլուծության եւ արժեւորման գործին:

Հայ եկեղեցու պատմության այս ուսումնասիրությունն ամենից առաջ օրինակելի է պատմա-աստվածաբանական ընկալումների համատեքստում: Աշխատանքի վերլուծական տրամաբանությունը մեկն է՝ Հայ եկեղեցին անուրանալի լումա է ներդրել քրիստոնեության պատմության, աստվածաբանական վիճաբանական հիմնախնդիրների, հավասարապես նաեւ դրանց լուծման յուրատիպ փորձ հանդիսացող դոգմատիկական վիճաբանությունների ոլորտում: Այդ համատեքստում հեղինակի կողմից առաջադրված հայեցակարգային հիմնադրույթներն ու եզրահանգումները ամրագրված են պատմա-

դավանաբանական փաստերով եւ իրենց ուղղվածությամբ էապես կարող են նպաստել Հայ եկեղեցու հոգեւոր եւ հասարակական դերի ծայրահեղություններից զերծ, օբյեկտիվ եւ համակարգված արժեւորմանը: Բազմավաստակ հայագետի առաջադրած լուծումները մեծ կարեւորություն են ներկայացնում նաեւ այն կապակցությամբ, որ դրանցից շատերը, ցավոք, մինչ օրս հավուր պատշաճի ներկայացված չեն հանրությանը:

Այդ համատեքստում վերլուծաբանն առաջին հերթին անդրադառնում է **Հայ եկեղեցու առաքելահիմն էության** հարցին եւ պնդում է պատմական անհերքելի այն փաստը, որ Հայաստանում Ավետարանի սերմնացանները Քրիստոսի Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալներն են, որոնք «իրենց արդար արյունով են ոռոգել մանանեխի այն հատիկները, որ նրանք, իրենց վարդապետի պատվերով, սերմանել էին բարեբեր հողում: Ժամանակի ընթացքում նրանց ցանած սերմերն աճեցին ու զորացան եւ այն մեծ ծառը կազմեցին, որի հովանու ներքո պատսպարվեց ու հասակ առավ հայոց եկեղեցու շուրջը համախմբված հայ հավատացյալ ժողովուրդը»: Այդ ելակետից է բխում նաեւ հեղինակի այն պնդումը, թե Հայ եկեղեցին «դրանով իսկ իրավամբ ընդունում է «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի» անունը»:

Ե. Տեր-Մինասյանը միաժամանակ հիմնավորում եւ պատմական հաստատուն փաստերի թվին է դասում նաեւ այն իրողությունը, որ «այդ քարոզությունների շնորհիվ քրիստոնեությունը Հայաստանում հաստատուն արմատներ է բռնում եւ III դարի կեսերից մեր հանդեպ է ելնում իբրեւ կազմակերպված եկեղեցական համայնքների մի միասնություն»: Եվ, որ չափազանց հետաքրքրական է, բազմավաստակ հայագետը Հայաստանում քրիստոնեության պետականացումը թվագրում է 280-ական թվականներով, այն որակում է որպես քրիստոնեության պատմության ամենաուշագրավ դեպքերից մեկը եւ պնդում է. «Երբ հռովմեական կայսր Կոստանդին Մեծը վճռեց քրիստոնեությունը պետական կրոն դարձնել, նա արդեն այդ գործում մի նախորդ ուներ, Հայոց Տրդատ թագավորը, որը նույն գործը կատարել էր Կոստանդին Մեծից երկու-երեք տասնյակ տարի առաջ»: Բնականաբար այդ գործընթացում նա միանգամայն օբյեկտիվ դիրքերից գնահատում է նաեւ Գրիգոր Լուսավորչի պատմական դերը: Նա Գրիգոր Պարթեւի՝ «հայոց երկրորդ լուսավորչի» պատմական ծառայությունն է համարում քրիստոնեության տարածումը եւ արմատավորումը Հայաստանում, ինչպես նաեւ՝ մոտ 30 եպիսկոպոսություններով եկեղեցական նվիրապետության կազմակերպումը: Վերլուծաբանը մեծապես կարեւորում է նաեւ Գրիգոր Լուսավորչի կողմից հեթանոսական ազգահոգեբանական եւ ազգակրոնական ավանդությունների «վերագրումը Քրիստոսին եւ քրիստոնեական եկեղեցու հայտնի սրբերին», «Միածնաէջ վայրում Հայոց եկեղեցական կյանքի կենտրոն սուրբ Էջմիածնի հիմնադրումը», ինչպես նաեւ՝ հարեւան երկրներում քրիստոնեության տարածումը: Եվ

այդ ամենի ընդհանրացմամբ պնդում է, որ «Հայ ժողովուրդը այդ մեծագործությունների հիշատակը հավերժացնում է նրանով, որ հետագայում Գրիգոր Պարթեւին տալիս է «Լուսավորիչ» մականունը եւ նրա անունը դասում է Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների շարքում»:

Չափազանց հետաքրքրական եւ արդիական է նաեւ Ե. Տեր-Մինասյանի կողմից IV-V դարերի Հայ եկեղեցու պատմության հավատքային, աշխարհաքաղաքական եւ հասարակական պայմանների վերլուծական գնահատականը: Փաստերի օբյեկտիվ վերլուծությամբ անդրադառնալով դարաշրջանի պարսկա-հռոմեական եւ պարսկա-բյուզանդական ռազմաքաղաքական հարաբերությունների, այդ ոլորտում Հայաստանի դերի, ինչպես նաեւ Սասանյանների հակաքրիստոնեական եւ հակահելլենիստական քաղաքականության հիմքերի վերլուծությանը, բազմավաստակ հայագետը վկայում է. «քանի որ քրիստոնյաներին հնարավոր չէր մազդայական կրոնին դարձնել, այդ ապացուցել էին արդեն կատաղի ապարդյուն հալածանքները», դա սասանյաններին հարկադրել է այլ միջոց որոնել, ինչպիսին «հունարենի գործածության արգելումն» էր: Հայաստանում այդ քաղաքականության ուղղակի արձագանքը համարելով «Լուսավորչի տան հելլենական կրթություն ստացած կաթողիկոսների առժամանակ փոխարինումը հարավ-արեւելյան Հայաստանի ասորական ազդեցության ոլորտի ներկայացուցիչ համարվող Աղբիանոսի տոհմով», ինչպես նաեւ երկրում պարսկասեր եւ հունասեր կուսակցությունների ձեւավորումն ու դրանց դեմ «ազգային կուսակցության» պայքարը, Ե. Տեր-Մինասյանը փաստարկված պնդում է. «Հունական օրիենտացիա ընդունեին հայերը, թե պարսկական, միեւնույնն է, նրանց սպառնում էր ազգային ինքնուրոյնության ու հոգեւոր անկախության լիակատար կորուստ»: Տեսաբանը փաստում է նաեւ, որ այդ պայմանները հայ ժողովրդի նշանավոր ներկայացուցիչներին (Վռամշապուհ թագավոր, Լուսավորչի տան վերջին ներկայացուցիչ Սահակ Պարթեւ կաթողիկոս, Մեսրոպ Մաշտոց վարդապետ եւ ուրիշներ) հարկադրել են «ազգային ինքնուրոյնությունն եւ հոգեւոր անկախությունն ապահովելու հաստատուն եւ անվրեպ միջոց որոնել»՝ ձերբազատվելու համար ինչպես ասորական, այնպես էլ հունական կողմնորոշումներից՝ երկուսից էլ ընդունելով այն ամենը ինչ որ օգտակար ու պիտանի էր ազգային ինքնուրույն կյանքի համար: «Այսպիսով, - ընդհանրացնում է վերլուծաբանը, - մեծագույն կարիքն ստեղծեց հոգեւոր ազատության լավագույն միջոցը՝ սեփական գիրն ու գրականությունը, եւ հայկական քրիստոնեությունն ու նրա հետ միասին հայ ժողովուրդը փրկվեց անխուսափելի կորստից»:

Ե. Տեր-Մինասյանի կողմից վերլուծական այդ տրամաբանությամբ է բացարվում նաեւ Սահակ Պարթեւի կաթողիկոսության շրջանը «Հայ եկեղեցու պատմության նոր դարագլուխ» որակումը: Հիմք ընդունելով այդ գործընթացի շարժիչ **կրոնական գործոնը**, նա համոզված պնդում է, որ «հայոց գիրն

ստեղծելու առաջին ու անմիջական շարժառիթը հայ ժողովրդին հայերեն լեզվով քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքները սովորեցնելն էր եւ մայրենի, բոլորի համար հասկանալի լեզվով եկեղեցական պաշտամունք կատարելը»: Նա նաեւ հավելում է, թե V դարի այս անանախընթաց գրական շարժումը «ծագել է իբրեւ ծառայություն քրիստոնեական կրոնի կարիքներին, բայց միեւնույն ժամանակ հենց իր հիմքում ունեցել է հայրենիքի անկախությանն ու հայ ժողովրդի ինքնուրոյնությանը ծառայելու բուռն տենչը: Այդ տենչից է առաջացել ազգային եկեղեցի եւ ազգային լեզու ու գրականություն ստեղծելու իրողությունը, որ դարեր շարունակ հայ ժողովրդի ինքնապահպանության եւ ինքնության զարգացման վառ փարոսն է եղել»:

Հեղինակն այդ շարժառիթով է բացատրում ոչ միայն Ս. Գրքի, այլեւ հայրաբանական, պաշտամունքային գրականության, կրոնական բնույթի աշխատանքների, ինչպես նաեւ՝ գիտական գրականության հայերեն «անգերազանցելի թարգմանական գրականության» ստեղծումը, որոնք, նրա համոզմամբ, «ըստ արժանվույն գնահատված են եւ գնահատվում են համաշխարհային գիտության կողմից»: Իր առջեւ կանգնած վերլուծական խնդիրները սերտորեն շաղկապելով սկզբնաղբյուրների եւ փաստական նյութի համակարգված պատմահամեմատական եւ աստվածաբանական վերլուծության հետ, վաստակաշատ գիտնականը մեծապես կարեւորում է նաեւ Հայ եկեղեցու գործունեության «ազգային եւ աշխարհիկ» տեսանկյունները: Այդ մոտեցումը հիմնավորվում է այն փաստով, որ «Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների՝ թարգմանիչների բեղմնավոր գործունեության հետեւանքով հայ ժողովուրդը իսկապես քրիստոնյա դարձավ, հայ ազգը ինքնագիտակցության եկավ, ճանաչեց ու ջերմորեն սիրեց իր անցյալն ու հայրենիքը: Թեեւ նա կորցրեց իր պետական անկախությունը, բայց նրա մեջ մշտապես վառ մնաց ազատության ձգտումը եւ այն զգացումը, որ մարդու եւ ժողովրդի համար ամենաբարձր բարիքը ազատությունն է եւ ամենասիրելի բանը՝ հայրենիքը, որի անկախությունը պաշտպանելու համար չպետք է խնայել ոչինչ, նույնիսկ կյանքը»: **Ազգակրոնական այդ մոտիվներով է բացատրվում նաեւ V դարում խղճի ազատության եւ հայրենիքի անկախության համար հայ ժողովրդի մղած գոյապայքարը**:

Այդ ամենով Հայ եկեղեցու պատմության օբյեկտիվ եւ հավասարակշռված այս մոտեցումը ընթերցողին ոչ միայն հաղորդակից է դարձնում ազգային եկեղեցու գործունեության ներքին՝ հոգեւոր հիմքերի, կրոնաբարոյական եւ իրավականոնական արժեքների պատմությանը, այլեւ՝ հայ հոգեւոր դասի ակնառավոր ներկայացուցիչների բազմապլան գործունեության համաքրիստոնեական նշանակությանը, ինչպես նաեւ՝ հոգեւոր կյանքի վրա նրանց ունեցած ազդեցության մանրամասներին: Հիշատակության է արժանի նաեւ այն փաստը, որ տեսական, պատմական եւ համեմատական կրոնագիտու-

թյան հիմնարար սկզբունքների, ինչպես նաեւ պատմա-աստվածաբանական եւ պատմահամեմատական մեթոդաբանության դիրքերից տեսաբանը առանձնահատուկ շեշտադրում է այն փաստը, որ հայոց թարգմանչաց շարժումը այնքան ընդարձակ է եղել եւ կատարվել է այնպիսի ընտրությամբ ու ճաշակով, որ անգամ արդի եվրոպական գիտության եւ գրականության համար եկեղեցական գրականության թարգմանական այդ երկերը բնագրային համարում ունեն: Այդ ամենով, պնդում է նա, «ստեղծվել է նաեւ այն ապահով ու վստահելի մտավորական հիմքը», որի վրա կառուցվել եւ զարգացել է հայ ինքնուրույն գրականությունը, որ «հսկայական թարգմանական գրականությանը զուգընթաց եւ նրան հարակից իրոք առաջանում եւ զարգանում է Հայաստանում այնպիսի մի ինքնուրույն գրականություն, որ հիրավի կարող է փայլուն կոչվել եւ անգերազանցելի է համարվել երկար դարեր»: Միաժամանակ, ըստ Ե. Տեր-Մինասյան վերլուծաբանի, թարգմանչաց գործունեությունը եւ հայ ինքնուրույն գրականության հիմնադրումն ու ծավալումը դուրս են գալիս ազգային շրջանակներից եւ համամարդկային նշանակություն ստանում: Ընդ որում, այս պարագայում եւս տեսաբանի կողմից առաջնային է համարվում հոգեւոր-կրոնական մոտիվը, քանի որ նա համոզված է, որ թարգմանիչների գործունեության արդյունքում «հայոց եկեղեցին իր պարտքը վերադարձրել է ընդհանրական քրիստոնեական եկեղեցուն եւ նրա գիտությանը»:

Այս համատեքստում հեղինակն իր պարտքն է համարել անդրադառնալ նաեւ հայ հոգեւոր դասի առանձին ներկայացուցիչների գործունեությանը կապված որոշ կնճռոտ հարցերի արժեքային վերանայմանը: Մասնավորապես, մերժելով հայոց Եզր եւ Ներսես Գ Կաթողիկոսների «քաղկեդոնական լինելու» վարկածը, վաստակաշատ գիտնականն իր մոտեցումը հիմնավորում է այն փաստով, որ քաղկեդոնական քրիստոսաբանության «անտրամաբանական եւ խառնաշփոթ որոշումը արեւելցիներին միայն զրկել է իրենց հավատքից», իսկ Հայ եկեղեցու դավանաբանական դիրքորոշումն այս հարցում եղել է չափազանց հստակ եւ անփոփոխ. այն «միշտ հավատարիմ է մնացել առաջին երեք տիեզերական ժողովների (գլխավորապես Աթանասի, Կյուրեղ Ալեքսանդրացու եւ այլն) վարդապետությանը եւ երբեք չի ընդունել ո՛չ Քաղկեդոնի եւ ո՛չ էլ նրանից հետո հետագա դարերում տեղի ունեցած այլ ժողովների ուսմունքը, դրանք բոլորը համարելով Սուրբ Գրքին եւ եկեղեցու մեր հիշած հեղինակավոր հայրերի ուսմունքին անհարիր, հակառակ եւ բոլորովին ավելորդ»: Այդ ամենի ընդհանրացմամբ տեսաբանը հավաստում է նաեւ, որ «*Թեեւ Հայոց եկեղեցու այս հայրապետները մեղադրված են որպես քաղկեդոնականության հարած անձինք, բայց այդ մեղադրանքը հիմնավորված չէ*»: Միաժամանակ, նա այդ պնդումը հիմնավորում է եկեղեցու պատմության մեջ տեղ գտած հավատքային խմորումների ներքին՝ հոգեւոր-աստվածաբանական պատճառների դիրքերից եւ հավաստում, որ այս

պարագայում եւս չի կարող խոսք լինել «հայոց հայրապետների քաղկեդոնականությանը հարելու» մասին, քանի որ նրանք համամիտ են եղել միայն միակամության՝ «մի կամքի» վարդապետության խիստ մեղմացված տարբերակի հետ, որը խորթ է «կլասիկ քաղկեդոնականությանը» եւ առավել մերձ՝ «միաբնակության[1] ըմբռնմանը»: Հետեւաբար Եզր եւ Ներսես Գ Կաթողիկոսները միայն հավաստել են «Անձնավորյալ Քրիստոսի մեկ կամքի» դավանությունը, ինչը լրացուցիչ մեկ անգամ եւս փաստում է, գրում է Ե. Տեր-Մինասյանը, որ «Հայոց եկեղեցին ընդհանրապես էլ, դավանական տեսակետից էլ այնպես ինքնուրույն եւ անկախ մնաց, ինչպես առաջ էր»:

Ձեռնարկի բնորոշ առանձնահատկություններից հաջորդն այն է, որ հեղինակը «Հայոց եկեղեցու ինքնուրույն եւ անկախ» էությունը հիմնավորելու անբաժան տարրերից է համարում հայ հոգեւոր դասի պատմական դերի համակարգված գնահատումը: Այդ նպատակով բազմափորձ վերլուծաբանն օբյեկտիվ մոտեցմամբ նախ բացահայտում է «օտար (բյուզանդական, լատինական, ասորական եւ այլ) ազդեցությունների» մարտահրավերները եւ դրանց հնարավոր հետեւանքները: Եվ պատմական փաստերի ու հավատքային իրողությունների ընդհանրացված վերլուծությամբ ցույց է տալիս, որ նշված հարաբերությունների ծիրում հայ հոգեւոր դասը կողմ է եղել «եկեղեցական հաղորդության» պահպանմանը եւ միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդմանը: Սակայն միաժամանակ փաստում է, որ այդ ոլորտում անփոփոխ է եղել այն, որ Հայ եկեղեցին այդ հարաբերությունները դիտարկել է որպես «հավասարների հարաբերություն» եւ ոչ մի պարագայում չի զիջել իր «ինքնուրույն եւ անկախ էության» որեւէ տարր: Եվ անգամ այն պարագայում, երբ հայոց քաղաքական եւ կրոնական վերնախավի ներկայացուցիչներն ինչ-ինչ նպատակներով զիջման քաղաքականություն են որդեգրել, «Հայ եկեղեցին իբրեւ ժողովրդական եկեղեցի», միշտ էլ խափանել է ամեն մի նման փորձ: Տեսաբանը միաժամանակ պարզաբանում է, որ այդ ամենից ամենեւին էլ չի հետեւում, թե իբր Հայ եկեղեցին միտումնավոր է խզել իր միջեկեղեցական հարաբերությունները: Հակառակը, նա ձգտել է պահպանել այդ հարաբերությունները, սակայն «առանց որեւէ ազդեցության», ինչն էլ օտարների կողմից բաժանման պատճառ է դարձել:

Եվ այդ համատեքստում է, գրում է նա, առավել ցայտուն արտահայտություն ստացել «սուրբ հայրերի ավանդությունների եւ պատվիրանների

1 Հեղինակի կողմից այս պարագայում եւ աշխատության մեջ օգտագործվող «միաբնակություն» եզրի օգտագործումը չպետք է թյուրիմացությունների տեղիք տա: Նախ այն պատճառով, որ այս շրջանում եկեղեցական պատմության մեջ «քաղկեդոնական» եւ «հակաքաղկեդոնական» եզրերը դեռեւս կիրառություն չունեին եւ դրանց փոխարեն օգտագործվում էր «միաբնակ» եւ «երկբնակ» եզրերը: Երկրորդ, Ե. Տեր-Մինասյանը իր աշխատություններից շատերում բազմիցս հիշատակում է, որ «միաբնակություն» ասելով հասկանում է «կյուրեղյան-եփեսոսյան ըմբռնումը», այսինքն «երկուց՝ մի» քրիստոսաբանական ըմբռնումը եւ հավելում, որ դա ոչ մի ընդհանուր եզր չունի ապոլինարական կամ եվտիքեսական հերձվածող միաբնակության հետ:

նկատմամբ հաստատուն եւ անշարժ» դիրքորոշում ունեցող հայոց հոգեւոր դասի նախանձախնդիր ներկայացուցիչների պատմական դերը: Աստվածաբանական, կրոնափիլիսոփայական, կրթամշակութային եւ հայ հոգեւոր դասի բազմաբեղուն գործունեության այլ ոլորտների քննական արժեւորման հիման վրա, վերլուծաբանը Ս. Սահակ Պարթեւի եւ Ս. Մեսրոպ վարդապետի աշակերտների (Հովսեփ Կաթողիկոս, թարգմանիչներ, Հովհան Մանդակունի, Գյուտ Արահեզացի եւ այլք), Հայոց նվիրյալ Հայրապետների (Ներսես Բ, Հովհաննես Բ, Մովսես Եղիվարդեցի, Վրթանես Քերթող տեղապահ, Աբրահամ Աղբաթանեցի, Կոմիտաս Աղցեցի, Ներսես Գ Տայեցի, Հովհան իմաստասեր Օձնեցի եւ այլք) եւ հայ հոգեւոր դասի ականավոր այլ ներկայացուցիչների (Հովհան Մայրավանեցի, Թեոդորոս Քռթենավոր, Սահակ Ձորափորեցի, Խոսրովիկ Թարգմանիչ եւ շատ ուրիշներ) գործունեության օրինակով ցույց է տալիս Հայ եկեղեցու դիրքերի ամրապնդման, աստվածաբանական սկզբունքների անհողդողդ պաշտպանության, «հերետիկոսությունների դեմ գրով մաքառելու», եկեղեցու կանոնական եւ ծիսաաստվածաբանական սկզբունքների ամրապնդման գործում հայ հոգեւոր դասի ունեցած պատմական դերը:

Դավանաբանական եւ պատմաճանաչողական ելեւէջների վերլուծական արժեւորմանը համահավասար արդիական մեծ հնչեղություն ունի նաեւ Ե. Տեր-Մինասյանի կողմից փաստական հարուստ նյութի համակարգային վերլուծությամբ բացահայտված **Հայ եկեղեցու եւ հոգեւոր դասի կրթամշակութային գործունեության ընդհանրացված արժեւորումը**: Դա գիտատեսական հաջողված խորքային այն վերլուծություններից է, որն այսօր եւս կարող է օգտակար լինել եկեղեցու առջեւ կանգնած մարտահրավերները հաջողությամբ հաղթահարելու գործում: Վաստակաշատ գիտնականի համար աներկբա է, որ հայոց հոգեւոր կյանքի կենտրոն վանքերն ի սկզբանե եղել են նաեւ «մտավոր մշակույթի կենտրոններ», որով իսկ բացառիկ դեր են կատարել հայ մշակույթի եւ դպրության զարգացման ասպարեզում: Հայոց վանքերի գիտակրթական եւ կրթամշակութային գործունեության համակարգված վերլուծությամբ Երվանդ Տեր-Մինասյանը պնդում է, որ դրանք բոլորն էլ եղել են «աստվածային գիտության աղբյուրի վրա թափվող ուսումնատենչ բազմության» կենտրոնատեղիներ: Փաստելով, որ այդ կենտրոնատեղիները պատմականորեն խիստ բազմաթիվ են, վերլուծաբանն առանձնացնում է առավել աչքի ընկած այնպիսի կենտրոններ, ինչպիսիք են Ե-Զ դարերի սահմանագծում Ղազար Փարպեցու ղեկավարած Ս. Էջմիածնի կաթողիկեի դպրոցը, «Մեծահանդես մայրաքաղաքի»՝ Տարոնի Ինանակնյան վանքը, Թեոդորոս Քռթենավորի ղեկավարած Արագածոտնի Ս. Աստվածածնի վանական դպրոցը, Բարսեղ Ճոնի՝ Շիրակի դպրեվանքը, Սյունյաց նշանավոր վարդապետարանը՝ իր նշանավոր ռաբունապետերով (Անանիա, Պետրոս, Ստեփանոս Սյունեցիներ,

Մաթուսաղա), Կամրջաձորի, Հոռոմոսի, Ս. Գրիգոր վանքի, Սանահինի, Հաղբատի, Թեղենյաց, Նարեկավանքի, Անիի, Կիլիկյան Հայաստանի Սեւ լեռան, Արիգի անապատի, Քեսունի Կարմիր վանքի, Հռոմկլայի, Արքակաղնի, Դրազարկի, Կաստաղոնի, Սկեւռայի եւ այլ վարդապետարանները: Ընդ որում, հեղինակը հավելում է նաեւ, որ Հայոց վանքերը եղել են շատ ավելի բազմաթիվ եւ իր կողմից հիշատակվել են միայն քչերը եւ ոչ բոլոր նշանավորները: Նա այդ պնդումը փաստում է նրանով, որ քննարկվող դարաշրջանում «*վանք նշանակում էր նաեւ դպրոց: Ամեն մի վանք իր դպրոցն ուներ, իսկ ամենանշանավորները ունեին բարձրագույն դպրոցներ, որոնք համալսարան էին կոչվում*: Վերջիններիս կարգին էին պատկանում Տաթեւի համալսարանը, Գլաձորի համալսարանը Վայոց ձորում, Հաղբատի եւ Սանահինի համալսարանը, Անիի բարձրագույն դպրոցը (ղեկավարը Հովհաննես սարկավագ վարդապետ), Մխիթար Գոշի Գետկավանքը կամ Գոշավանքը եւ այլն»:

Տեսաբանը միանգամայն հիմնավոր ցույց է տալիս նաեւ Հայ եկեղեցուն բնորոշ «չափազանց ուշագրավ» այն փաստը, որ այդ ողջ շրջանում եկեղեցում «վարդապետի հատուկ պարտքն է համարվում աշակերտներ հավաքել իր շուրջը եւ նրանց գիր ու գրականություն սովորեցնել»: Որպես փաստ, Երվանդ Տեր-Մինասյանը մատնանշում է նաեւ այն իրողությունը, որ «Վանքերի ծաղկման, գրի ու գրականության հանդեպ ունեցած այդպիսի հոգատար վերաբերմունքի շնորհիվ Ժ.-ԺԲ. դարերում ծաղկեց նաեւ գիտությունն ու արվեստի տարբեր ճյուղերը՝ մանրանկարչությունը եւ հայկական ուրույն ճարտարապետությունը, որի հոյակապ հուշարձանները մնացել են ցայսօր»:

Ե. Տեր-Մինասյանը վանական կյանքի եւ դպրոցաշինության ծավալման Հայ եկեղեցու գործառույթներով է բացատրում «ԺԵ-ԺԸ արհավիրքի դարերի» իր նախադեպը չունեցող ծանր կացության հաղթահարումը եւ եկեղեցու վերազարթոնքը. «Միայն ԺԷ. դարի սկզբից, - գրում է նա, - ընդհանուր զարթոնքի եւ հոգեւոր վերածնության լույսը փայլատակեց հայոց աշխարհում: Այս կապակցությամբ հատուկ հիշատակության արժանի է Մովսես Գ Խոտանանցի, Փիլիպպոս Ա Աղբակեցի, Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսների եւ նրանց հաջորդների գործունեությունը»: Վերլուծական այդ տրամաբանությամբ նա պարզաբանում է նաեւ, որ «Վերածնության սկիզբը նրանով դրվեց, որ նոր անապատներ ու վանքեր հիմնվեցին հայոց երկրի զանազան կողմերում եւ նրանցում դպրոցներ բացվեցին՝ ուսում ու գիտություն տարածելու համար»: Այդ շարքում հիշատակելով Հարանց, Լիմ, Սեւանի եւ Տանձափարախ անապատների, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Հավուցթառի, Գլաձորի, Երեւանի Անանիա առաքյալի վանքի դպրոցները՝ նա պնդում է, որ «Այս վանքերի ու նրանց դպրոցների գործունեության շնորհիվ Հայոց եկեղեցին վերակենդանացավ եւ ապացուցեց իր կենսունակությունը»:

Ե. Տեր-Մինասյանն այս ոլորտում Հայ եկեղեցու սպասավորության եւ պատմական ծառայության մեկ այլ վկայություն է համարում այն, որ «հայ վերանորոգիչ կաթողիկոսները ժամանակի իրենց ճիշտ ըմբռնողությունը ցույց են տալիս նաեւ նրանով, որ հոգ են տանում տպագրական արվեստը հայերի մեջ արմատավորելու մասին եւ Էջմիածնից կարող հոգեւորականներ են ուղարկում Եվրոպա՝ հայկական տպարաններ հիմնելու նպատակով»[2]: Համոզված, որ Հայ եկեղեցու պատմությանը վերաբերող ցանկացած հիմնահարց առաջին հերթին պետք է քննարկել հոգեւոր ու հասարակական կոնկրետ պայմանների համատեքստում՝ հեղինակն այդ դիրքերից միանգամայն հիմնավոր արժեւորում է «ուսումնասեր, բազմաշխատ եւ բազմարդյուն» Սիմեոն Երեւանցու դերը, որը մեծ ծառայություն է ունեցել Հայ եկեղեցին բարեկարգելու եւ Ս. Էջմիածինը լուսավորության կենտրոն դարձնելու գործում: Այդ նպատակասլաց գործունեության հոգեզավակն է համարվում նաեւ Ս. Էջմիածնում տպարան եւ թղթագործարան հիմնելը: Իսկ տպագրական գործի անանց արդյունք է համարվում Ս. Գրքի, հայ մատենագիրների եւ այլ գրքերի հրատարակությունը, որով «հայ հոգեւորականների եւ աշխարհականների կրթությունը ավելի բարձր մակարդակի հասցվեց»: Գրատպության, ինչպես նաեւ Մխիթարյանների ջանքերով էլ Հայ եկեղեցին ԺԸ. դարում «հարաբերություններ է մշակում նաեւ արեւմտյան գրականության եւ կուլտուրայի հետ»: Իսկ այդ բնագավառի ԺԹ. դարի ամենանշանավոր իրադարձություններ է համարում «հայ հոգեւորականության եւ հայ ուսուցչության մտավոր եւ բարոյական մակարդակի բարձրացման» հիմք համարվող Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի եւ Գեւորգյան հոգեւոր Ճեմարանի հիմնումը, որոնց սաների ջանքերով էլ հայ ժողովրդի մեջ ծավալվում է ընդհանուր կրթության գործը՝ թեմական եւ ծխական դրոցների գործունեության տեսքով:

Բավականին արժեքավոր եւ ուշագրավ է նաեւ Ե. Տեր-Մինասյանի կողմից Հայ եկեղեցու ամբողջականության առաջադրված լուծումը: Նրա համար գաղտնիք չէ, որ «պատմության ընթացքում փառասեր հոգեւորականների կողմից շատ փորձեր են արվել խախտելու Հայոց եկեղեցու միասնությունը կամ անջատվել Հայոց եկեղեցու միությունից»: Որպես օրինակ հիշատակվում են Աղթամարի եւ Սսի մասնավոր կաթողիկոսությունները, որոնք օգտվելով խառնակ դրությունից, երբեմն նույնիսկ «ոտնձգություններ էին անում Հայոց եկեղեցու ընդհանրական կաթողիկոսության դեմ եւ իրենց ո՛չ միայն անկախ, այլ նաեւ ամենայն Հայոց կաթողիկոս էին հայտարարում»: Սակայն հավելում է նաեւ, որ այդ եւ նման փորձերը ժամանակի ընթացքում անխուսափելիորեն ձախողվել են եւ «միշտ հաղթող է հանդիսացել այն ճիշտ գիտակ-

2 Ե. Տեր-Մինասյանը Հայոց կաթողիկոսների բեղուն գործունեության արդյունք է համարում Լեմբերգում (1616 թ.), Լիվորնոյում (1640 թ.), Նոր-Ջուղայում (1640 թ.), Ամստերդամում (1660 թ.) եւ Կ. Պոլսում (1677 թ.) հիմնադրված տպարանները:

ցությունը, թե Հայոց եկեղեցու կենսական ուժը նրա միասնության մեջ է: Այդպես է եղել անցյալում, նույնն է լինելու անհրաժեշտաբար նաեւ ապագայում»,- ընդհանրացնելով գրում է նա: Այդ համատեքստում վերլուծաբանն իր պարտքն է համարել անդրադառնալ նաեւ Հայրապետական աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելու շարժառիթների համակարգված ուսումնասիրությանը: Աթոռի տեղափոխման հոգեւոր եւ հասարակական-քաղաքական պայմանների քննարկումը նրան բերել է այն հետեւության, որ «Աթոռը կրկին փոխադրելու պատճառներն էին՝ նախ, հայերի քաղաքական իշխանության բարձումը Կիլիկիայում, որով վերանում էր հայրապետական աթոռը Կիլիկիայում պահելու անհրաժեշտությունը, երկրորդ, Սսի կաթողիկոսական աթոռի ըստ ամենայնի ընկած վիճակը, որի հետեւանքով կաթոլիկության քարոզությունը ... եռանդով տարածվում էր թե՛ Արեւմտյան եւ թե՛ Արեւելյան Հայաստանում, երրորդ, հայոց եկեղեցու ինքնուրոյնությունն ու անկախությունը պաշտպանելու բուռն ձգտումը»: Ահա թե ինչու «վերջնական անկման առաջն առնելու համար անհրաժեշտ համարվեց հայրապետական աթոռը կրկին Ս. Էջմիածին փոխադրել»,- եզրակացնում է վերլուծաբանը:

Փաստական նյութի անկողմնակալ եւ օբյեկտիվ վերլուծությամբ Երվանդ Տեր-Մինասյանը միանգամայն հիմնավորված ցույց է տալիս նաեւ, որ Հայ եկեղեցու զարգացման եւ ծառայական առաքելության բնականոն ընթացքը հերթական անգամ խաթարվել է ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին, երբ «Աբդուլ Համիդի գազանական կրքերին» զոհ գնացին հարյուր հազարավոր անմեղ հայեր, իսկ երկու տասնամյակ անց «Թուրքիայի բարբարոս կառավարությունը իրագործելով իր վաղեմի տենչը, ոչնչացրեց պետության սահմաններում ապրող հայերին: Այդ քաղաքականության զոհ գնացին միլիոնավոր հայեր եւ հայ ժողովուրդը նորից ճղակոտոր եղավ եւ ցրվեց ի սփյուռս աշխարհի. դրա հետ միասին թուլացավ, բնականաբար, նաեւ Հայոց եկեղեցին»:

Ըստ էության նույն մոտեցումն է դրսեւորում նախ Խորհրդային կառավարության կրոնական քաղաքականության հարցում: Հայտնի պատճառներով չկարողանալով մանրամասնել Հայ եկեղեցու պատմության այս ժամանակահատվածը բնորոշող «հանկարծական փոփոխությունը», գիտական օբյեկտիվության իր որդեգրած սկզբունքին հավատարիմ Ե. Տեր-Մինասյանն այն բնութագրում է որպես «ծանր ու դժվարին» շրջան: Հայ եկեղեցու ծոցում ծնված, եկեղեցական ավանդությամբ դաստիարակված եւ կրթված ականավոր հայագետ-գիտնականը սեղմ, բայց չափազանց տարողունակ ձեւով հավելում է, որ այդ պայմաններում անգամ Հայ եկեղեցին հավատարիմ մնաց իր հետապնդած առաքելությանն ու տեսիլքին: Այդ մասսին նա գրում է. «Բայց Հայոց եկեղեցին կարողություն ունեցավ պատվով դուրս գալու այդ դրությունից եւ իր անմիջական պարտականություններին անդրադառնալու: Այստեղ պետք է առանձնապես հիշատակել հանգուցյալ Գեորգ Զ. եւ ներկայիս գահա-

կալ Վազգեն Ա. կաթողիկոսների գործունեությունը, որոնք աշխատեցին եւ աշխատում են փակված եկեղեցիները բաց անել, ավերված կամ կործանման ենթակա վանքերը վերանորոգել, հիմնեցին «Էջմիածին» անունով պաշտոնական եւ կրոնա-բանասիրական ամսագիրը՝ հավատացյալ ժողովրդի կրոնա-բարոյական եւ մտավոր կարիքները բավարարելու համար: Վերջապես, հայոց եկեղեցուն պատրաստված հոգեւորականություն մատակարարելու նպատակով հիմնեցին ու գուրգուրանքով պահում են Էջմիածնի Վանական հոգեւոր ճեմարանը: Մեծ է նրանց դերը նաեւ հայրենաբաղձ հայերին իրենց հայրենիքը վերադարձնելու գործում»:

Մասնագիտական ծանրակշիռ վերլուծությամբ էլ ավարտվում է աշխատանքը, որտեղ ընդհանրացված ձեւով ներկայացվում են Հայ եկեղեցու ինչպես հավատքային, այնպես էլ նվիրապետական կառույցի բնորոշ առանձնահատկությունները:

Անդրադառնալով Հայ եկեղեցու դավանաբանական դիրքի, եկեղեցական սովորությունների եւ այլ եկեղեցիներից ունեցած տարբերություններին, Ե. Տեր-Մինասյանը մատնանշում է Հայ եկեղեցու անփոփոխ այն դիրքորոշումը, որ «*Հայոց եկեղեցին իր դավանական դիրքով կանգնած է մնում հին քրիստոնեական եկեղեցու դիրքերի վրա.* նա ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների (Նիկիո 325 թ., Կ. Պոլսի 381 թ. եւ Եփեսոսի 431 թ.) որոշումները եւ մերժում է Քաղկեդոնի 451 թ. ժողովից սկսած բոլոր մյուս ժողովները: Գալով *եկեղեցական սովորություններին՝ անհրաժեշտ է դիտել, որ այստեղ էլ Հայոց եկեղեցին նախնական քրիստոնեական եկեղեցու հարազատ ներկայացուցիչն է*»:

Տեսաբանը հավաստում է նաեւ այն իրողությունը, որ «*Հայոց եկեղեցին ազգային, ժողովրդական եւ, չնայելով ի սիրուս աշխարհի ցրված լինելուն, միասնական եկեղեցի է: Ազգային է, այդ նշանակում է, որ հայ հավատացյալ ժողովրդի համար ազգ եւ եկեղեցի հասկացությունները դարերից ի վեր միացած են եղել իրար հետ եւ հայ ազգը որպես ամբողջություն հավատարիմ է մնացել իր առաքելահիմն ու լուսավորչահաստատ եկեղեցուն*»: Այդ իրողությունը մատնանշելով՝ Ե. Տեր-Մինասյանը միաժամանակ հավաստում է, որ որքան էլ այլ եկեղեցիները փորձել են պառակտում առաջացնել Հայոց ազգային եկեղեցու մեջ, այդ բանը նրանց չի հաջողվել: Տեսաբանը վստահ է նաեւ, որ յուրատիպ այդ հավատարմության հիմքում ընկած է այն իրողությունը, որ «*Հայոց եկեղեցին ժողովրդական եկեղեցի է*»՝ հավատացյալ ժողովրդի լիակատար իրավատեր մասնակցությամբ: Արդիական մեծ հնչեղություն ունի նաեւ վաստակաշատ գիտնականի այն պնդումը, որ «*Հայոց եկեղեցին միասնական եկեղեցի է.* թեեւ նրա հավատացյալ հոտը ցրված է աշխարհով մեկ եւ ապրում է տարբեր վարչակարգ ունեցող տարբեր պետությունների սահմաններում, բայց *այդ*

եկեղեցին բոլոր հավատացյալ հայերի համար մեկ է: Ուր էլ ապրելիս լինի հայ հավատացյալ մարդը, նա իրեն հոգեպես միշտ կապված է զգում Հայ եկեղեցու եւ նրա կենտրոնի՝ Սուրբ Էջմիածնի հետ, որտեղ գտնվում է Լուսավորչի աջը, որտեղից նա իբրեւ միության խորհրդանշան սուրբ մեռոնն է ստանում եւ որտեղ նստում է այդ եկեղեցու Գերագույն պետը՝ *Ամենայն Հայոց Կաթողիկոսը*»: Վերլուծաբանը նկատում է նաեւ, որ եկեղեցու կառավարման գործում Ամենայն Հայոց կաթողիկոսին օժանդակում են Կոստանդնուպոլսի եւ Երուսաղեմի պատրիարքները եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը: Այդ բարձրագահ հոգեւոր պետերը անկախ եւ ինքնուրույն են իրենց ենթակայության *տեղական նշանակություն ունեցող* հոգեւոր ու նյութական բոլոր գործերում, «սակայն, *ընդհանուր Հայոց եկեղեցուն վերաբերող բոլոր սկզբունքային բնույթ կրող հարցերում նրանք ենթակա են Էջմիածնում նստող Ամենայն Հայոց Գերագահ կաթողիկոսին*: Հենց սրանով էլ արտահայտվում է Հայոց եկեղեցու միասնությունը» եւ կենսական ուժը,- ամփոփելով գրում է Ե. Տեր-Մինասյանը:

Այսպիսով, հանձին այս վերլուծության՝ ընթերցողին է առաջարկվում **ամբողջական, ինքնուրույն եւ ավարտուն մի աշխատանք**, որն իր որակական ցուցանիշներով, ինչպես գիտատեսական, այնպես էլ գիտագործնական մեծ արժեք ունի մերօրյա ազգային միջավայրի համար: Աշխատանքի շրջանակներում առաջադրված բազմաթիվ տեսական ընդհանրացումներ եւ հայեցակարգային դրույթներ կիրառական կարեւոր նշանակություն կարող են ունենալ նաեւ Ճեմարանի եւ բուհական կրթահամակարգի համապատասխան դասընթացների համար:

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
փիլ. գիտ. թեկն., դոցենտ